ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամների հետ համագործակցություն

Համատեղ հետազոտություններ, երիտասարդ կադրերի աջակցություն, մասնակցություն միջոցառումներին

Յուրի Հովհաննիսյանի (ՌԴ) նախաձեռնությամբ նոյեմբերին ԳԱԱ-ում անցկացվեց «Սառը միաձուլման 50-ամյակը» միջազգային գիտաժողովը, որին մասնակցեցին անվանի գիտնականներ 12 երկրներից:

Անահիտ Տոնապետյանը (Ֆրանսիա) ԳԱԱ ազգաբանության և հնագիտության ինստիտուտի հետ համատեղ կատարել է տվյալների հավաքագրման և անոտացիայի աշխատանքներ՝ արցախցի փախստականների կյանքի պատմությունների միջառարկայական ուսումնասիրություն (մարդաբանություն և լեզվաբանություն) կատարելու նպատակով:

Արամ Ռոբերտ Մինասյանն **(Ավստրալիա)** իր հիմնած «Արամ և Շերի Մինասյանների անվան գիտաճարտարագիտության ոլորտի ասպիրանտների» կրթաթոշակ է շնորհել ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի մեկ ասպիրանտի: Հանդես է եկել զեկույցով ՀՀ-ում Microwave & THz Technologies and Optoelectronics (IRPhE 2024) միջազգային գիտաժողովին:

Ֆերդինանդ Մկրտչյանը (ՌԴ) ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի և Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի հետ իրականացրել է Սևանի ջրի որակի գնահատման նոր մեթոդների մշակման հետազոտություններ:

Պողոս-Լևոն Զեքիյանը (Իտալիա), Մկրտիչ Թումանյանը (Իրան), Արմեն (Կլոդ) Մութաֆյանը (Ֆրանսիա) հաշվետու տարում այցելել են ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ՝ համատեղ ծրագրերի քննարկման նպատակով:

Ռայմոնդ Գևորգյանը (Ֆրանսիա) հանդիսացել է ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում պաշտպանած գիտական ատենախոսության գիտական ղեկավար:

Պիտեր Լանգերը (Գերմանիա) ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի հետ համատեղ ISTC թիվ AM-2705 նախագծի շրջանակներում իրականացնում է «Ոչ սպիտակուցային ամինաթթուների, պեպտիդների և պոլիմերների վրա հիմնված հակավիրուսային (հակ SARS-CoV) և հակաբակտերիալ միացությունների նպատակային սինթեզ և զննում» խորագրով գիտական հետազոտություն: Աջակցել է մեկ գիտաշխատողի եռամսյա վերապատրաստմանը Գերմանիայի Ռոստոկի համալսարանում:

Դանիել Դանիելյանը **(**Ֆրանսիա) ԳԱԱ երկրաբանական գիտությունների և Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտների հետ համագործակցության շնորհիվ ներգրավված է ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳ GREATPAL և BAZOUM ծրագրերին: Աջակցում է երիտասարդ գիտնականների վերապատրաստման գործընթացին, այդ թվում՝ ERASMUS+ ծրագրի շրջանակներում:

Սերգեյ Ղազարյանի (Մեծ Բրիտանիա) և ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի համագործակցության արդյունքում կենտրոնում բացվել է նոր լաբորատորիա: Ս. Ղազարյանն աջակցել է Լոնդոնի կայսերական քոլեջում 1 երիտասարդ գիտնականի վերապատրաստմանը: 2024 թ. ընթացքում մասնակցել է երեք հայաստանյան միջոցառումների: Նշանակվել է Տոկիոյի տեխնոլոգիական ինստիտուտի հրավիրյալ պրոֆեսոր 2024 թվականի ապրիլից երկու տարով:

Վեհարի Սաքանյանը (Ֆրանսիա) շարունակել է ակտիվ համագործակցություն իրականացնել «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի հետ:

Արմեն Սերգեևը (ՌԴ) հանդիսացել է մեկ ԵՊՀ ասպիրանտի ընդդիմախոս:

Ալեքսանդր Խոջամիրյանը (Գերմանիա) սերտ համագործակցել է Ա. Ալիխանյանի անվան լաբորատորիայի հետ, աջակցելով աշխատակիցների վերապատրաստմանը Գերմանիայում և իրականացնելով համատեղ գիտական հետազոտություններ:

Գիտական պարգևներ, մրցանակներ և կոչումներ

Սոս Աղայանն (ԱՄՆ) ինչպես 2023 թ.-ին, այնպես էլ 2024 թ.-ին ընդգրկվել է Սթենֆորդի համալսարանի աշխարհի լավագույն գիտնականների ամենամյա ցանկում (ցանկում ընդգրկվում է գիտնականների 2%-ը): Դասվել է 55,000 հաստատությունների ակադեմիական, արդյունաբերական և կառավարական լավագույն գիտնականների շարքին (ընդհանուր ցանկում ընդգրկված է ավելի քան 30 միլիոն գիտնական, լավագույնների շարքը կազմում է ընդամենը 0.05%-ը):

Աբրահամ Տերյանը (ԱՄՆ) 2024 թ. արժանացել է Հայկական հետազոտությունների ասոցիացիայի մրցանակին:

ԳԱԱ կազմակերպությունների և արտասահմանյան անդամների միջև գործող համագործակցությունների արդյունքում տպագրվել է 10-ից ավել հոդված բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում, արտասահմանում վերապատրաստվել է 15-ից ավել երիտասարդ կադր:

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամների թվաքանակն ըստ գիտական ուղղությունների և երկրների.

N	Երկիր	Մաթեմատիկական և տեխնիկական գիտություններ	Ֆիզիկա և աստղաֆիզիկա	Բնական գիտություններ	Քիմիա և Երկրի մասին գիտություններ	Հայագիտություն և հասարակական գիտություններ	Ընդամենը
1	ՌԴ	8	5	9	8	6	36
2	ԱՄՆ	9	6	6	4	2	27
3	Ֆրանսիա	1	4	2	2	6	15
4	Գերմանիա		5	2			7
5	Մեծ Բրիտանիա	1		1	1		3
6	Իտալիա					1	1
7	Շվեդիա	1	1				2
8	Ճապոնիա			1			1
9	Կանադա	1		1			2
10	Ուկրաինա	1			1		2
11	Ավստրալիա		1	1			2
12	Իրան	1					1
13	Հունաստան	1					1
14	Բելառուս				1		1
15	Հարավային Կորեա		1				1
16	Լիբանան					1	1
Ընդամենը՝		**24**	**23**	**23**	**17**	**16**	**103**